

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Հոկտեմբեր 6. *թ.* 1965. *Առաջադրութեամբ Թոյլ տուաց Ղարաբաղի Հայոց կոնսիստորիայի նախագահող Տ. Զաւէն վարդապետին պ. Առաքել Առաքելեանցին կարգել թեմի ծխ. դպրոցների համար տեսչի ժամանակաւոր պաշտօնակատար տարեկան* 1000 *ռուբլի ռոճկով։*

Հոկտմ. 8. *թ.* 1967. *Առաջադրուեց Մինսդին Տ. Եղիշէ վարդապետ Ա.հարօնեանին կարգել Նուխուոյ վիճակի փոխանորդ, որպիսի պաշտօնը կատարել էր առաջ։ Կարճել նրա միաբանական ռոճիկը, տալ ճանապարհածախք վիճակային արդիւնքից և սահմանել նրան փոխանորդի ռոճիկ։*

Հոկտմ. 8. *թ.* 1968. *Առաջադրուեց Մինսդին կարճել Տ. Բենիկ վարդապետի միաբանական ռոճիկը հոկտեմբերի* 1-*ից, որովհետև նա արդէն կարգուած է Թիֆ-*

լիզի գիմնազիաներից մէկում ուսուցիչ և այնտեղ ռոճիկ է ստանում։

Հոկտմ. 10. թ. 1969. Առաջադրուեց Սինոդին ուղարկել Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին մի հարիւր ռուբլի Կիլիկիայի Որբանոցամ Կենդրոնական Յանձնաժողովին յանձնելու, որպէս Մայր Աթոռի միանուագ նպաստ։

Հոկտմ. 10. թ. 1972. Առաջադրութեամբ թոյլ տրուեց Ատրպատականի առաջնորդ Տ. Մխիթար եպիսկոպոսին Սօչիում կրկին երկու սեռի դպրոց բանալու։

Հոկտմ. 10. թթ. 1978—75. Առաջադրուեց Մայր Աթոռի ժառանգաւորանապետ Տէր Մեսրոպ եպիսկոպոսին, Երևանի Փոխ-Թեմական Տ. Խորէն եպիսկոպոսին, Տփղիսի և Ղարաբաղի Հայոց կոնսիստորիաների նախագահողներին կարգադրել իրանց իրաւասութեան շրջանում աջակցութիւն ցոյց տալ տայնի սովետնիկ Պրախովին վանքերում ու եկեղեցիներում եղած գեղարուեստական հին և նոր արտադրութիւնները ուսումնասիրելու։

Հոկտմ. 13. թ. 1979. Առաջադրուեց Ճեմարանի վարչութեանը, Ճեմարանում երգեցիկ խումբ կազմելու և եկեղեցում կիրակէ և տօն օրերին խմբական երգեցողութիւնը Տաճարում ղեկավարելու համար տալ Ռուբէն Աբեղային տարեկան երկու հարիւր ռուբլի։

Հոկտմ. 13. թ. 1980. Առաջադրութեամբ յանձնուեց Սինոդի հայրապետական գիւանում եղած այն թղթերի պատճէնները. որոնցով շուշեցի հանգ. Իսահակ Թադէոսեանի ժառանգները հանգուցեալի յիշատակին խոստացել էին հանգ. Հայրապետին 5000 ռ. կրթական գործի համար։

Հոկտմ. 14. թ. 1985. Թուղթ կոյս Հռիփսիմէ Թաքիրեանցին, որով նա Թիֆլիզի կուսանաց Ս. Ստեփաննոս անապատի իրաւասուների ընտրութեան և Թիֆլիզի թեմի ժամանակաւոր կառավարիչ Տ. Եփրեմ եպիսկոպոսի ա-

ռաջարկութեան համեմատ հաստատուեց նոյն անապատի մայրապետ։

Հոկտմ. 14. թ. 1987. Առաջադրութեամբ Հնդկաստանի և Պարսկաստանի Հայոց առաջնորդ Տ. Սահակ Արքեպիսկոպոսին թոյլ տրուեց գնալ Հնդկաստան Դելհի քաղաքը Հնդկահայերի կողմից ներկայ լինելու Անգլիոյ թագաւորի Հնդկաստանի կայսր թագադրելու ժամանակ։

Հոկտմ. 15. թ. 1990. Ցանձնելով Սինոդին Ներքին Գործոց Նախարարի գրութեան պատճէնը՝ առաջադրուեց նոյն գրութեան համեմատ շրջաբերականով պատուիրել Ռուսաստանի բոլոր հայ առաջնորդներին կարգադրել, ի նպաստ պատերազմում՝ վտանգուած զինուորների ընտանիքների եկեղեցիներում՝ գանձանակ շրջեցնել։

Հոկտմ. 15. թ. 1991. Կտուց անապատի միաբանութեան անունով վշտակցութեան և մխիթարանքի թուղթ, նոյն անապատի վանահայր Ստեփան եպիսկոպոս Աղաջանեանի վախճանի առիթով։

Հոկտմ. 15. թ. 1993. Առաջադրուեց Ալէքսանդրոպոլի փոխանորդին յայտնելու պ. Երուանդ Տ. Մինասեանին, թէ կաթուղիկոսական Տեղակալի իրաւասութիւնից դուրս է միջամտել Կ. Պոլսոյ Հայոց կենդրոնական վարչութեան կարգադրութիւններին, ի մասնաւորի, այն կարգադրութեանը, որով բեկուած է յիշեալ Երուանդ Տէր Մինասեանի կաթուղիկոսական ընտրութեան պատգամաւոր ընտրուելը։

Հոկտմ. 16. թ. 1997. Առաջադրութեամբ յայտնուեց Բեսսարաբիայի և Նոր-Նախիջևանի Հայոց առաջնորդ Տ. Ներսէս արքեպիսկոպոսին, թէ 1907 թ. յունվարի 11-ին Ծխական Կանոնադրութիւնը քանի որ զօրութեան մէջ է, պարտաւորական է։

Հոկտմ. 18. թ. 2000. Յայտնուեց Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքական Տեղապահին թէ, Կիւմշեան կտակի հաշուին 22 լիրա 88 չէկը ստացուել և յանձնուել է Սինոդին։

Հոկտ. 20. թ. 2003. Առաջադրութեամբ Հայրապետական ընտրութեան պատգամաւորներին ընդունելու և հիւրասիրելու համար կազմուեց յանձնաժողով որի նախագահն է Սինոդի անդամ Տ. Բարգէն վարդապետ, անդամներն են Վանական Կառավարութեան նախագահ Տ. Ներսէս վարդապետ Մելիք—Թանգեան, Տպարանի վարչութեան անդամ Տ. Արէլ Աբեղայ, որոնց պէտք է գործակցեն Ճեմարանի տեսուչ Տ. Բագրատ վարդապետ և Մայր Աթոռոյս հիւրընկալ Տ. Սիօն վարդապետ։

Հոկտ. 20. թ. 2004. Առաջադրուեց Սինոդին պատուիրել գանձապահին տալ կաթուղիկոսական ընտրութեան պատգամաւորների ընդունելութեան Յանձնաժողովին ծախքի համար հարկաւոր գումարը։

Հոկտ. 31. թ. 2030. Յայտնուեց Կ. Պոլսոյ հայոց պատրիարքական Տեղապահին, թէ Ճեմարանում կընդունուեն այն պատանեակները որոնք ծրագրի համեմատ պատրաստ կը լինեն և հասակով էլ համապատասխան. նաև ուղարկուեց Գ. դասարանի ծրագրի մի օրինակ։

ՔԱՂՈՒԱԾ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Հոկտեմբեր 3. թ. 667. Սինոդը որոշեց հրաւիրել այս հոկտեմբերի 1-ից երդուեալ հաւատարմատարի օգնական պ. Աղէքսանդր Յարութիւնեան Պարոնեանցին վարելու Մայր Աթոռի դատական գործերը։ Պ. Պարոնեանը պարտաւոր է պաշտպանել Երևանի Նահանգական Դատարանում և Տիֆլիսի Դատաստանական պալատում Սինոդի, Երևանի կոնսիստորիայի և Երևանի թեմի վանքերի կալուածական և բոլոր այլ դատական գործերը։

Հոկտեմբեր 10. թ. 680. Սինոդը լսեց Ղարաբաղի կոնսիստորիայի 1910 թ. Սեպտեմբերի 22-ի № 3004 յայ-